ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆԱՍՅԱՆ ՀԱՅԿ ՄԱՔՍԻՄԻ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԻԴ.03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ
աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝
աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ավագյան Արամ Ռոստոմի

Պաշտոնական ընդդիմախոսներ.
աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Կարինե Դանիելյան Սուրենի
աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Եղյան Գոհար Բաբկենի

Առաջատար կազմակերպություն՝ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

Պաշտպանությունը կայանալու է 2019թ. հոկտեմբերի 9-ին ժամը 14:30-ին ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում գործող Երկրաբանության 054 մասնագիտական խորհրդում
Հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24ա

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ գրադարանում

Սեղմագիրն առաքված է 29.08.2019

054 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,
երկր. գիտ. թեկնածու՝ Սահակյան Լիլիթ Հրանտի

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արդի դարաշրջանում բնակչության միգրացիաները զանգվածային և գլոբալ բնույթ են կրում՝ պատճառահետևանքային բազմակողմանի փոխադարձ կապերի մեջ գտնվելով հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և էթնո-մշակութային գործընթացների հետ: Բնակչության միգրացիայի առանձին կողմերի ուսումնասիրությամբ զբաղվում են բազմաթիվ գիտություններ, որոնց համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում աշխարհագրությունը, մասնավորապես՝ հասարակական աշխարհագրությունը (ՀԱ): Դա բացատրվում է հետևյալ երկու հանգամանքներով. **ա)** բնակչության միգրացիան սոցիալ-տարածական երևույթ է և զգալի ազդեցություն է թողնում հասարակության տարածքային կազմակերպման վրա, **բ)** բնակչության միգրացիան համալիրային երևույթ է, և, նկատի ունենալով աշխարհագրական հետազոտության ինտեգրալ ներուժն ու համակարգային բնույթը, աշխարհագրությունն այլ գիտությունների համեմատ ավելի պատրաստ է իրականացնելու միգրացիայի բազմակողմանի և փոխկապակցված տարածաժամանակային և համալիրային ուսումնասիրություններ:

Բնակչության միգրացիայի մասշտաբներն ավելի մեծ են լինում, և դրանց ազդեցությունն ու հետևանքներն առավել ցայտուն են դրսևորվում այն երկրներում ու տարածաշրջաններում, որտեղ վերջին երկու-երեք տասնամյակներին հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի են ունեցել համակարգային և արմատական փոփոխություններ: Այդպիսի երկրների թվին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ), որտեղ անկախացումից հետո տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական տեղաշարժերն առաջացրել են բնակչության արտագաղթի մեծ ալիքներ: Այդ ամենի արդյունքում երկրից արտագաղթում է տարեկան միջին հաշվով բնակչության 1,5%-2%-ը:

Ներկայումս հրատապ են դարձել ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրությունները, քանի որ բնակչության արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերը պատճառահետևանքային սերտ կապերի մեջ են գտնվում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող գործընթացների հետ և շարունակում են զգալի ազդեցություն թողնել տնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման վրա: ՀՀ բնակչության միգրացիայի առաջացրած սոցիալ-տնտեսաաշխարհագրական բազմաբնույթ հիմնախնդիրները ՀՀ ռազմավարական անվտանգային շահերի տեսանկյունից էապես մեծացնում են մարզերի և համայնքների բնակչության արդի միգրացիոն տեղաշարժերի տարածաժամանակային և համալիրային բազմակողմանի ուսումնասիրությունների իրականացման անհրաժեշտությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը:

Հետազոտության նպատակն է՝ կատարել ՀՀ բնակչության միգրացիայի համալիրային և տարածաժամանակային աշխարհագրական վերլուծություն, բացահայտել և գնահատել միգրացիոն տեղաշարժերի արդի վիճակը, պատճառահետևանքային կապերը և ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացման և տարածքային կազմակերպման վրա:

Հետազոտության նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ հետազոտական խնդիրները:

1. Վերլուծել և ընդհանրացնել բնակչության միգրացիայի աշխարհագրական հետազոտության արդի տեսական գաղափարներն ու մեթոդաբանական

մոտեցումները, փորձել դրանց օգտագործմամբ մշակել ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական հետազոտությունների հիմնական ուղղությունները, մակարդակները, մեթոդներն ու մոտեցումները:

2. Բացահայտել ՀՀ բնակչության արդի միգրացիոն հոսքերի ձևավորման քաղաքական, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և էթնո-մշակութային գործոններն ու պայմանները, պարզել դրանց կապը միգրացիայի տարածաժամանակային փոփոխությունների հետ:

3. Վեր հանել միգրացիայի տարածաշրջանային առանձնահատկությունները, պարզել տարբեր տիպի և մեծության բնակավայրերի բնակչության միգրացիոն տրամադրվածությունները, դրանք առաջացնող համապետական և համայնքային գործոններն ու հիմնախնդիրները:

4. Բացահայտել բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերը, առանձնացնել միգրացիոն առումով առավել խոցելի տարաբնակեցման կենտրոններն ու բնակավայրերի տիպերը:

5. Վերլուծել միգրացիայի տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, քաղաքական և էթնո-մշակութային տարածաշրջանային հետևանքներն ու հիմնախնդիրները, կանխատեսումներ անել միգրացիայի հնարավոր մասշտաբների և ուղղությունների վերաբերյալ:

6. Գիտականորեն հիմնավորված առաջարկություններ անել ՀՀ բնակչության միգրացիայի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ աշխարհագրական գործոնների հաշվառման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության ժամանակակից արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերն են, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ բնակչության միգրացիաների տարածաժամանակային փոփոխություններն ու առանձնահատկությունները, հասարակական կյանքի տարբեր ոլորտների տարածքային կազմակերպման հետ ունեցած փոխադարձ կապերը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել բնակչության միգրացիայի վերաբերյալ առկա տեսական գաղափարներն ու մեթոդաբանական մոտեցումները, հայ և արտասահմանյան գիտնականների աշխատանքները:

Որպես տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Միգրացիայի պետական ծառայության, ՀՀ Կենտրոնական բանկի, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացված մշակումներն ու հետազոտությունները, պաշտոնական տեղեկատվությունները, ինչպես նաև մեր կողմից կատարված սոցիալ-աշխարհագրական դաշտային հետազոտության արդյունքները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության և համադրման, համեմատական-աշխարհագրական, արտարկման, մաթեմատիկական, վիճակագրական, սոցիոլոգիական, քարտեզագրական մեթոդներ և համալիրային, տիպաբանական, տարածական, տարածաժամանակային, հիմնախնդրային մոտեցումներ:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Առաջին անգամ համադրելով տարածաժամանակային և համալիրային մոտեցումները՝ իրականացվել է ՀՀ բնակչության ժամանակակից միգրացիայի համակողմանի հասարակական-աշխարհագրական ուսումնասիրություն:

2. Բացահայտվել են բնակչության արտաքին միգրացիայի փուլերը, արդի միտումներն ու տարածաշրջանային առանձնահատկությունները, դրանց կապերը քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական գործընթացների հետ:

3. Անկախության բոլոր տարիների համար մեր կողմից հաշվարկված ՀՀ մարզերի, բոլոր քաղաքների և նախկին վարչական շրջանների (ՆՎՇ) գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի (ՄՍ) ցուցանիշներով առանձնացրել ենք դրանց խմբերն ու տարածաշրջանային տիպերը:

4. Բացահայտվել են ՀՀ մարզերի, տարբեր մեծության և տեղադիրք ունեցող բնակավայրերի բնակչության միգրացիոն տրամադրվածությունները, դրանց ձևավորման տեղական-համայնքային և համապետական գործոններն ու հիմնախնդիրները, միգրացիոն հնարավոր տեղաշարժերի աշխարհագրական նախապատվությունները:

5. Բացահայտվել են ՀՀ բնակչության միգրացիայի տարածաշրջանային քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական հետևանքներն ու հիմնախնդիրները, առանձնացվել են միգրացիոն տեսանկյունից առավել խոցելի քաղաքներն ու տարաբնակեցման կենտրոնները:

6. Կանխատեսումներ են արվել ՀՀ և նրա մարզերի միգրացիոն գործընթացների սպասվող միտումների վերաբերյալ, առաջարկություններ են արվել միգրացիայի պետական կարգավորման ուղիների ու առաջնահերթությունների որոշման դեպքում տարածաշրջանային առանձնահատկությունների և պայմանների հաշվառման վերաբերյալ:

Պաշտպանվող հիմնադրույթները:

1. Հաստատվել է միգրացիայի տարածաժամանակային օրինաչափությունների կապը տնտեսական, քաղաքական և սոցիալ-ժողովրդագրական տարբեր գործընթացների հետ:

2. Հիմնավորվել է անկախության տարիներին տարածության և ժամանակի մեջ Հայաստանի բնակչության արտաքին միգրացիայի բացասական սալդոյի համընդհանուր և համատարած բնույթը:

3. Սոցիալ-աշխարհագրական հետազոտություններով հիմնավորվել են ՀՀ մարզերի, տարբեր տեղադիրքի և մեծության քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչության միգրացիոն բարձր տրամադրվածությունները, դրանց ձևավորման պայմանների և միգրացիոն նախապատվությունների տարածքային տարբերությունները:

4. Հիմնավորվել է, որ ՀՀ տարաբնակեցման համակարգի կառուցվածքային և տարածական տեղաշարժերն ավելի շատ պայմանավորված են արտաքին, քան թե ներքին միգրացիոն տեղաշարժերով:

5. Հաստատվել են խորհրդային տարիների համեմատությամբ անկախության տարիներին բնակչության ներքին միգրացիաների ոչ մեծ մասշտաբները, դրանց միակենտրոն բնույթն ու աննշան դերը ուրբանիզացման գործընթացներում:

Կիրառական նշանակությունը: Ստացված փաստական նյութերը, մեթոդաբանական մոտեցումները և հետազոտության արդյունքները կարող են գիտական հիմք հանդիսանալ ՀՀ Միգրացիայի պետական ծառայության համար՝ ՀՀ բնակչության միգրացիայի արդի իրավիճակը գնահատելու և կարգավորման արդյունավետ քաղաքականություն մշակելու գործում, ինչպես նաև կարող են օգտագործվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ՀՀ

տարածքային զարգացման հայեցակարգերի մշակման, մարզերի և քաղաքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքներում:

Հետազոտության արդյունքները, փաստական նյութերը և մեթոդական մշակումները կարելի է օգտագործել նաև բուհական ուսումնական գործընթացներում:

Աշխատանքի փորձաքննությունը և հրապարակումները: Հետազոտության հիմնադրույթները և արդյունքները զեկուցվել և տպագրվել են միջազգային և հանրապետական նշանակության գիտաժողովներում.

● «Modern problems of geography and anthropology» Proceedings of International Conference, Tbilisi, 2015

● «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողով, ԵՊՀ, Երևան, 2015

● «Հայկական լեռնաշխարհ» հանրապետական գիտաժողով, ՀՊՄՀ, Երևան, 2015

Աշխատանքի տեսական ընդհանրացումները և եզրակացությունները զեկուցվել և քննարկվել են ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի սեմինարներում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական ինը հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը շարադրված է 157 էջի վրա: Ընդգրկում է 5 քարտեզ, 38 նկար (դիագրամ և սխեմա), 6 աղյուսակ և հավելվածը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության առաջին գլուխը վերաբերում է բնակչության միգրացիայի աշխարհագրական հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերին: Բնակչության միգրացիաները սոցիալ-տնտեսական տարածական բարդ և համալիրային երևույթներ են և գտնվում են տարբեր հասարակական գիտությունների (տնտեսագիտություն, սոցիոլոգիա, ժողովրդագրություն, հասարակական աշխարհագրություն) հետաքրքրությունների կենտրոնում, քանի որ դրանք կապված են հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ և զգալի ազդեցություն են թողնում սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական-քաղաքական տարբեր գործընթացների վրա: Բնակչության միգրացիան, լինելով տարածական երևույթ, իր բնույթով նախ և առաջ աշխարհագրական է և որոշակի առումով արտահայտում է տարբեր տարածքների և բնակավայրերի փոխհարաբերությունների բնույթը: Դրանով է բացատրվում միգրացիոն գործընթացների նկատմամբ աշխարհագրության առանձնահատուկ հետաքրքրությունը: Սակայն աշխարհագրությունը չպետք է սահմանափակվի միայն միգրացիայի տարածական կողմերը ուսումնասիրելով, քանի որ, միգրացիան, լինելով բարդ սոցիալ-տարածական երևույթ և մարդկանց վրա բազմաթիվ և բազմապիսի գործոնների ազդեցության հետևանք, պահանջում է նաև տարածաժամանակային ու համալիրային ուսումնասիրություններ, որտեղ միգրացիա երևույթը, հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ ունեցած իր տարաբնույթ փոխադարձ կապերով, պետք է դիտվի մեկ ամբողջական տարածական համակարգի մեջ: Իսկ աշխարհագրության տեսական և մեթոդաբանական հնարավորությունները թույլ են տալիս ՀԱ-ին իր վրա վերցնելու այդ պատասխանատվությունը, քանի որ, ինչպես կարող են վկայել

նախկինում կատարված բազմաթիվ հետազոտությունները, միգրացիայի առանձին կողմերի ուսումնասիրությամբ հնարավոր չէ ամբողջական գնահատական տալ և լիարժեք բացատրել միգրացիա երևույթի պատճառահետևանքային կապերն ու տարածական օրինաչափությունները:



Նկար 1. *ՀՀ բնակչության միգրացիայի հասարակական-աշխարհագրական ուսումնասիրության սխեման*

Բնակչության միգրացիայի ուսումնասիրությունների տեսական և մեթոդաբանական հարցերով զբաղվել են մի շարք հայտնի աշխարհագետներ, տնտեսագետներ և սոցիոլոգներ (Գ. Ռավենշտեյն, Վ. Զելինսկի, Է. Լիի, Մ.Պիորե, Ա. Յագելսկի, Վ.Պերեվեդենցև, Բ.Խորև և այլոք): Մասնավորապես, արևմտյան գիտնականների կողմից տրվել են միգրացիայի տեսություններն ու «վանող-ձգող» և գրավիտացիոն մոդելները: ՀՀ բնակչության միգրացիայի ուսումնասիրություններով զբաղվել են մի շարք հայ աշխարհագետներ, տնտեսագետներ, ժողովրդագիրներ և

սոցիոլոգներ (Գ. Ավագյան, Վ. Խոջաբեկյան, Մ. Ֆահիրադյան, Գ. Պողոսյան և այլոք), սակայն կատարված գրեթե բոլոր հետազոտությունները վերաբերում են միգրացիայի առանձին կողմերին, թույլ են ներկայացված և համադրված միգրացիայի ուսումնասիրման համալիրային և տարածաժամանակային մոտեցումները: Վերլուծելով և ընդհանրացնելով բնակչության միգրացիայի վերաբերյալ արտասահմանցի և հայ հեղինակների կողմից կատարված ուսումնասիրությունները՝ փորձել ենք հստակ ձևակերպել ՀՀ բնակչության միգրացիայի հասարակական-աշխարհագրական ուսումնասիրության հիմնական ուղղությունները, մակարդակները, մեթոդներն ու մոտեցումները (նկ. 1):

ՀՀ մարզերի և համայնքների բնակչության միգրացիայի վերաբերյալ պաշտոնական-փաստական տվյալները խիստ անբավարար են աշխարհագրական խոր և բազմակողմանի հետազոտություններ կատարելու համար: Ընդ որում, ճշգրիտ տվյալները բացակայում են ոչ միայն միգրացիաների կազմի, պատճառների և ուղղությունների, այլև անգամ դրանց իրական մասշտաբների վերաբերյալ: ՀՀ բնակչության միգրացիայի իրական մասշտաբները կարելի է ստանալ՝ համադրելով մշտական բնակչության թվաքանակի աճի և բնական աճի ցուցանիշները, իսկ միգրացիայի կազմի, պատճառների և ուղղությունների մասին տվյալներ ստանալու համար անհրաժեշտ է կատարել խոշորամասշտաբ սոցիալ-աշխարհագրական դաշտային հետազոտություններ:

Երկրորդ գլուխը վերաբերում է ՀՀ բնակչության արտաքին միգրացիայի մասշտաբներին, ուղղություններին և պատճառներին: Մինչխորհրդային և խորհրդային տարիներին ՀՀ ներկայիս տարածքի բնակչության արտաքին միգրացիոն տեղաշարժերում գերակշռել է ներգաղթը, ընդ որում եղել են ներգաղթի ակտիվ և պասիվ փուլեր: Սակայն պատկերն ամբողջովին փոխվեց խորհրդային վերջին տարիներից սկսած, երբ արտագաղթի ծավալները սկսեցին գերազանցել ներգաղթի ծավալներին, իսկ Հայաստանի անկախացմամբ այդ հարաբերակցությունն ավելի սրվեց, և ՀՀ-ից բնակչության արտագաղթը կրեց զանգվածային բնույթ (1992-1994թթ.), իսկ ներգաղթը դարձավ աննշան: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ՀՀ առաջին տարիներին տնտեսական կտրուկ անկումը ուղեկցվում էր Արցախում շարունակվող պատերազմական իրավիճակով, անվերջանալի շրջափակումներով, արդյունաբերական ձեռնարկությունների փակման հետ կապված զանգվածային գործազրկության առաջացմամբ, ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացմանն ու խորացող էներգետիկական ճգնաժամի կասեցմանն ուղղված պետական կառավարման բարդություններով: 1995թ.-ից սկսած ՀՀ տնտեսական իրավիճակի կայունացմանը և բարելավմանը զուգընթաց կայունացավ նաև միգրացիոն իրավիճակը, արտագաղթը կորցրեց իր զանգվածային բնույթը: 2008-2009թթ.-ից սկսած տնտեսական ճգնաժամը, աղքատության և գործազրկության աճը մեծացրեցին արտագաղթի ծավալներն ու ՄՍ-ի բացասական ցուցանիշները:

Տնտեսության միակենտրոն տարածքային կառուցվածք ունեցող ՀՀ բնակչության միգրացիոն հոսքերի ձևավորման սոցիալ-տնտեսական և այլ բնույթի պամանների ու գործոնների տարածքային տարբերությունների առաջացման վրա զգալի ազդեցություն է թողնում Երևան քաղաքը: Մայրաքաղաքից ունեցած հեռավորության մեծացմանը զուգընթաց նվազում են բնակչության խտությունը և տնտեսական յուրացման բնույթն ու աստիճանը, ինչպես նաև միգրացիոն հոսքերի ձևավորման վրա ազդող այլ գործոններն ու պայմանները: Բնակչության միգրացիայի ինտենսիվությամբ և ուղղություններով, պատճառահետևանքային կապերի բնույթով կարելի է

առանձնացնել երեք տարածքային միավորներ՝ 1) Երևան քաղաքը, 2). Երևանի հարակից գոտին, որն ընդգրկում է Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերը, 3) ծայրամասային (լեռնային) գոտին, որն ընդգրկում է Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերը: Նշված երեք գոտիներից անկախության ամբողջ ժամանակաշրջանում ՄՍ-ի ամենափոքր բացասական ցուցանիշներն ունեցել է Երևանը, իսկ ամենամեծը՝ ծայրամասային-լեռնային գոտին:

Երևանից ունեցած հեռավորության մեծացմանը զուգընթաց մեծանում է նաև մարզերի բնակչության մեջ ժամանակավոր բացակաների մասնաբաժինը, որն իր հերթին բացատրվում է այն հանգամանքով, որ Երևանի հարակից գոտու բնակչությունը հնարավորություն ունի ճոճանակային միգրացիայի միջոցով իր զբաղվածության կամ կրթության պահանջմունքները բավարարել մայրաքաղաքում՝առանց փոխելու մշտական բնակության վայրը:

ՀՀ բնակչության միգրացիոն տրամադրվածությունները, դրանք ձևավորող գործոններն ու միգրացիայի նախընտրելի ուղղությունները, դրանց տարածքային տարբերությունները բացահայտելու նպատակով 2015-2016թթ. ԵՊՀ ուսանողների մասնակցությամբ Երևանում և ՀՀ բոլոր մարզերի տարբեր մեծության 60 բնակավայրերում (18 քաղաք և 42 գյուղ) իրականացվել են սոցիալ-աշխարհագրական դաշտային հետազոտություններ, մշակվել է 2557 հարցաթերթիկ: Ստացված տվյալների ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ միգրացիոն տրամադրվածությունները համատարած բնույթ ունեն, իսկ դրանց ձևավորման վրա ազդող գործոնների մեջ հարցվողները ամենաշատը նշել են աշխատատեղերի բացակայության և ցածր աշխատավարձի հիմնախնդիրները (հարցվողների համապատասխանաբար 59%-ը և 56%-ը), սակայն պատասխանների մեջ քիչ տոկոս չեն կազմել նաև սոցիալ-քաղաքական բնույթի հիմնախնդիրները (անարդարություն՝ 37%, օրենքների չկիրառում՝ 37%, զարգացման հեռանկարների բացակայություն՝ 35%, կոռուպցիա՝ 28%): Արտագաղթի ուղղություններում հարցվողներն առավել նախընտրում են ՌԴ-ը, այնուհետև՝ Եվրոպական երկրներն ու ԱՄՆ-ը: Սակայն պետք է նշել, որ ՀՀ մարզերում, տարբեր տիպի և մեծության քաղաքային և գյուղական բնակավայրերում նկատվում են պատասխանների զգալի տարբերություններ: Մասնավորապես, միգրացիոն տրամադրվածություններն առանձնապես բարձր են Կոտայքի մարզի քաղաքներում, ծայրամասային գոտու մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում, և ցածր՝ երևանի հարակից մարզերի գյուղական բնակավայրերում:

Երրորդ գլուխը նվիրված է ՀՀ բնակչության միգրացիոն տեղաշարժերի տարածաժամանակային վերլուծությանը: Հայաստանի անկախացմամբ կտրուկ նվազեցին ներքին միգրացիայի ծավալները, քանի որ երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր իրավիճակը հանգեցրեց նրան, որ նախկինում ներքին միգրացիոն ակտիվությամբ աչքի ընկնող քաղաքներն իրենք դարձան արտահոսքի խոշոր կենտրոններ: Խորհրդային տարիներին գերակշռող՝ գյուղից քաղաք ուղղությամբ միգրացիաներն անկախության առաջին տասնամյակում մասամբ փոխարինվեցին քաղաքից գյուղ ուղղությամբ մարդկանց տեղաշարաժերով՝ պայմանավորված գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհմամբ և գյուղատնտեսության ոլորտի համեմատաբար բարվոք վիճակով: Հայաստանի քաղաքների (1975-2001թթ.) և ՆՎԾ-երի գյուղական բնակչության (1986-2001թթ.) եկողների և մեկնողների թվաքանակների տարածաժամանակային վերլուծության արդյունքում առանձնացրել ենք քաղաքների 6 և ՆՎԾ-երի 5 հիմնական խմբեր, որոնք իրարից տարբերվում են միգրացիոն տեղաշարժերի ուղղությունների ու ծավալների

բնույթով և ակտիվ ու պասիվ փուլերով: Ընդհանուր առմամբ, քաղաքների դեպքում նկատվում է այն օրինաչափությունը, որ խորհրդային տարիներին ՄՍ-ն մեծամասամբ եղել է դրական, իսկ անկախության տարիներին՝ բացասական: Ե՛վ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերի դեպքում միգրացիայի մասշտաբները մեծացել են 1987-1992թթ., պայմանավորված երկրում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական լուրջ տեղաշարժերով: ՆՎՇ-երի գյուղական բնակչության դեպքում նույնպես 1990-ական թթ. երկրորդ կեսին ՄՍ-ն հիմնականում եղել է բացասական, իսկ միգրացիոն տեղաշարժերի ծավալները՝ փոքր:

Առանձին բնակավայրերի կտրվածքով բնակչության միգրացիայի վերաբերյալ փաստական տվյալների բացակայության պայմաններում կատարել ենք սեփական հաշվումներ՝ նպատական ունենալով ստանալ և միմյանց հետ համադրել 1992-2015թթ. ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության, ինչպես նաև 2002-2015թթ. բոլոր քաղաքների և ՆՎՇ-երի գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցները: Դրանք հաշվել ենք հետևյալ բանաձևով.

$$\text{ՄՍ}_{q} = \frac{(\text{Բ}_{x+1} - \text{Բ}_{x}) - \text{ԲԱ}_{x}}{\bar{\text{Բ}}_{x}} \times 1000$$, որտեղ ՄՍ_{q} -ն միգրացիայի սալդոյի գործակիցն է, Բ_{x} -ը՝ X-րդ տարում բնակչության թվաքանակը, Բ_{x+1}-ը՝ X-րդ տարվա հաջորդ տարում բնակչության թվաքանակը, ԲԱ_{x}-ը՝ բնական աճը X-րդ տարում, $\bar{\text{Բ}}_{x}$ -ը՝ X-րդ տարում բնակչության միջին թվաքանակը:

Ստացված տվյալները վերահաստատեցին այն, որ 1990-ական թթ. ՀՀ-ից մարդկանց ինտենսիվ արտագաղթին համեմատաբար ավելի մեծ մասնակցություն ուներ քաղաքային բնակչությունը, իսկ ներքին միգրացիոն ուղղությունները չնայած մասշտաբային չէին, սակայն մեծամասամբ ունեին քաղաքից գյուղ ուղղություն: Սակայն արդեն 2000-ական թթ. մեծացան նաև գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական ցուցանիշները, որը նշանակում է, որ և՛ մեծացավ արտագաղթին գյուղական բնակչության մասնակցության չափը, և՛ ներքին միգրացիոն ուղղություններում գրեթե վերացան քաղաքից գյուղ ներքին միգրացիաները (նկ. 2):



Նկար 2. *ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 1992-2015թթ. (‰)*


N
W
E
S
Դիլիջան -10.8‰
Դեբեդ -10.8‰
Դաստակերտ -13.9‰
Գորիս -8.5‰
Թաքսաան -10.9‰
Սիսիան -10.8‰
Ագարակ -13‰
Մեղրի -8‰
Մարտունի -15.9‰
Վարդենիս -10.5‰
Գավառ -11.3‰
Ջրվեժ -15.2‰
Գեղարքունիք -19.9‰
Գրիգորան -16.6‰
Ամասիա -16.1‰
Ստեփանավան -16.9‰
Թումանյան -16‰
Ալավերդի -16.3‰
Վանաձոր -11.1‰
Տաշիր -19.9‰
Գյումրի -15.9‰
Սպիտակ -19.3‰
Թալին -18.2‰
Մարալիկ -19.7‰
Ապարան -14.9‰
Ոստան -11.2‰
Ծաղկաձոր -11.2‰
Հրազդան -15.2‰
Գառնի -17.2‰
Դարբնիսի -12.6‰
Գրիբոյեդով -15.6‰
Եղվարդ -14.2‰
Աշտարակ -11.8‰
Արագածոտն -14.3‰
Ոտ -13.1‰
Հաղբատակ -11.2‰
Ալագյազ -10.3‰
Մասիս -13.1‰
Վեդի -13.1‰
Արարատ -16‰
Արտաշատ -10.6‰
Մեղրաձոր -12.1‰
Ջերմուկ -12.2‰
Գեղարքունիք -10.5‰
Մասիս -13.1‰
Մարտունի -15.9‰
Գավառ -11.3‰

Գուգարքի, ինչպես նաև՝ Շիրակի մարզի Արթիկի ՆՎԾ-ների գյուղական բնակավայրերում: Ստացված տվյալների հիման վրա առանձնացրել ենք քաղաքների և ՆՎԾ-ների գյուղական բնակչության 4 տիպեր (տես քարտեզներ 1, 2):



Քարտեզ 2. *ՆՎԾ-ների գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.*

Մարզերի քաղաքների և ՆՎԾ-երի գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի համադրված վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ անկախության տարիներին ՀՀ միջբնակավայրային և ներմարզային միգրացիոն կապերը շատ թույլ են արտահայտված, ներքին միգրացիաները առավելապես կրում են միակենտրոն բնույթ, այսինքն՝ ուղղված են դեպի Երևան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ եթե համապետական հիմնախնդիրները հիմնականում առաջացնում են արտագաղթելու տրամադրվածություն, ապա տեղական-բնակավայրային գործոններն ու հիմնախնդիրները համայնքի բնակչության մոտ կարող են առաջացնել նաև ներքին կամ միջբնակավայրային միգրացիոն տրամադրվածություններ, ուստի մեր կողմից կատարված սոցիալ-աշխարհագրական դաշտային հետազոտությունների ժամանակ հարցաթերթիկներում ներառել էինք նաև հարց՝ տեղական-բնակավայրային հիմնախնդիրների վերաբերյալ: Ինչպես ցույց են տալիս հարցումները, չնայած հարցվողները տեղական-բնակավայրային բնույթի գործոններից ամենաշատը նշել են տարածքի բարեկարգման, ժամանցի վայրերի բացակայության հիմնախնդիրները, սակայն Երևանում, երկու գոտիների մարզերում և տարբեր տիպի և մեծության բնակավայրերում այդ հիմնախնդիրները տարբեր սրություն և բնակչության կողմից տարբեր ընկալումներ ունեն:

ՀՀ մարզերի և քաղաքների բնակչության ՄՍ-ի և տարբեր տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ցուցանիշների միջև փոխկապակցվածության բացահայտման նպատակով կատարել ենք կոռելյացիոն կապի վերլուծություն: Արդյունքում ստացվել է, որ կոռելյացիոն սերտ ուղիղ կապ գոյություն ունի մարզերի ՄՍ-ի բացասական ցուցանիշի և աղքատության ցուցանիշի, նպաստ ստացող ընտանիքների և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակների միջև (0.71-0.96), իսկ այլ ցուցանիշների հետ կոռելյացիոն կապերի գործակիցները ցածր են 0,5-ից:

Չորրորդ գլուխը նվիրված է ՀՀ բնակչության միգրացիայի հասարակական-աշխարհագրական հետևանքներին և ՀՀ բնակչության միգրացիայի կանխատեսման ու կարգավորման հիմնահարցերին: ՀՀ բնակչության միգրացիան զգալի ազդեցություն ունի երկրում ուրբանիզացման գործընթացների և տարաբնակեցման կառուցվածքի վրա: Ներկայումս ՀՀ գրեթե բոլոր բնակավայրերը մասնակցում են միգրացիոն գործընթացներին և ունեն միգրացիայի բացասական սալդո: Մեր կողմից կատարված հաշվումները ցույց են տալիս, որ ՄՍ-ի բացասական ցուցանիշները համեմատաբար բարձր են 2007-2011թթ., իսկ մարզերի կտրվածքով՝ Լոռիում և Շիրակում (նկ. 3):



Նկար 3. *Երևանի և ՀՀ մարզերի բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցներն ըստ ժամանակահատվածների (‰)*

Իսկ Երևանը, չնայած դառձել է արտագաղթի խոշոր օջախ, սակայն միգրացիոն տեսանկյունից շարունակում է գրավիչ մնալ ՀՀ այլ բնակավայրերի համար: Մայրաքաղաքը գրավիչ է նաև ՀՀ ներգաղթողների համար, մասնավորապես՝ 2011-2012թթ.-ին ՀՀ ներգաղթած հազարավոր սիրիահայերի ավելի քան 80%-ը բնակություն են հաստատել հենց մայրաքաղաքում: Այս ամենի արդյունքում ավելի են խորանում Երևանի և այլ բնակավայրերի միջև եղած տարբերությունները, որն անշուշտ չի բխում ՀՀ տարաբնակեցման համակարգի և միգրացիոն իրավիճակի բարելավման շահերից: Աշխարհագրական առումով կարևոր է, որպեսզի բնակչության միգրացիայի ուսումնասիրություններ կատարվեն նաև ըստ տարաբնակեցման կենտրոնների և բնակավայրերի տիպերի, քանի որ տարբեր են դրանցում միգրացիայի ուղղությունները, ինտենսիվությունը և մասշտաբները: ՄՍ-ի բացասական ցուցանիշները 2002-2015թթ. բոլոր տարիներին համեմատաբար ցածր են Երևանում և Իջևան մարզկենտրոնում, իսկ ամենաբարձրը՝ Վանաձոր մարզկենտրոնում: Վերջին տարիներին աճել են Երևանի հարակից գոտու Արտաշատ և Աշտարակ մարզկենտրոնների բնակչության ՄՍ-ի բացասական ցուցանիշները: ՀՀ հանքագործական կետրոններում ՄՍ-ի բացասական ցուցանիշները համեմատաբար ցածր են Քաջարանում և Ախթալայում, և բարձր՝ Թումանյանում և Շամլուղում: Նշված միագործառույթային քաղաքների բնակչության միգրացիոն տեղաշարժերը հիմնականում կախված են դրանց տնտեսական հիմքը կազմող հանքագործական ձեռնարկությունների գործունեությունից, և դրանց նույնիսկ ժամանակավոր ընդհատումն առաջացնում է միգրացիայի նոր ալիքներ: Ինչպես հանքագործական կենտրոններում, այնպես էլ վերամշակող արդյունաբերության կենտրոններում, 1990-ական թթ. համեմատությամբ նկատվում է ՄՍ-ի բացասական գործակիցների որոշակի նվազում: 2002-2015թթ. ՄՍ-ի ցուցանիշների մեծ տատանումներ չեն նկատվում կուրորտային կենտրոններում (Դիլիջան, Ջերմուկ, Ծաղկաձոր), որտեղ դրանք բավականին ցածր են, իսկ Դիլիջան քաղաքում որոշ տարիներին ՄՍ-ն անգամ եղել է դրական:

ՀՀ բնակչության միգրացիայի ազդեցությունը տնտեսական ոլորտի զարգացման և տարածքային կազմակերպման վրա երկակի է, սակայն երկարաժամկետ կտրվածքով գերակշռում են բացասական հետևանքները: Դրական հետևանքների մեջ կարելի է առանձնացնել արտագաղթողների և աշխատանքային միգրանտների կողմից ՀՀ ուղարկվող ֆինանսական օգնությունները, արտագաղթի պատճառով երկրում գործազրկության մեղմացումը և սոցիալական լարվածության թուլացումը: Սակայն բնակչության միգրացիայի բացասական հետևանքներն ավելի ծանրակշիռ և մտահոգիչ են: ՀՀ բնակչության արտագաղթի միջոցով տեղի է ունենում մարդկային կապիտալի արտահոսք, երկիրը զրկվում է տնտեսությունը զարգացնելու իրական ռեսուրսներից, մեծանում են տնտեսության զարգացման տարածքային անհամաչափությունները և այլն: Ընդ որում, եթե ՀՀ բնակչության արտաքին միգրացիայի պատճառները, մասշտաբները և ուղղությունները հիմնականում պայմանավորված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացվածության մակարդակով, ապա ներքին միգրացիաների դեպքում՝ երկրի ներսում տնտեսության տարածքային կազմակերպման բնույթով, սոցիալ-տնտեսական զարգացման տարածքային տարբերություններով: ՀՀ մարզերը միմյանցից տարբերվում են տնտեսության ճյուղային կառուցվածքով, հետևաբար միջմարզային միգրացիաները թույլ են արտահայտված, քանի որ բնակչության միգրացիոն տեղաշարժեր առաջացնում են ոչ այնքան տնտեսական մասնագիտացման, որքան սոցիալ-տնտեսական զարգացման տարբերությունները, որոնք առաջին հերթին դրսևորվում են Երևանի և մնացած մարզերի միջև:

Բնակչության միգրացիայի ազդեցությունը մեծ է նաև ՀՀ ժողովրդագրական իրավիճակի և նրա տարածքային տարբերությունների ձևավորման վրա: Հաշվի առնելով այն, որ միգրացիոն ակտիվությամբ աչքի են ընկնում հատկապես երիտասարդ աշխատունակ տարիքի տղամարդիկ, արտաքին միգրացիաների միջոցով մեծապես փոխվում է ՀՀ-ի և նրա մարզերի բնակչության սեռատարիքային կառուցվածքը. սեռային կազմում մեծանում է կանանց, իսկ տարիքային կառուցվածքում՝ հետաշխատունակ տարիքի բնակչության մասնաբաժինը: Դրանց արդյունքում նվազում են ամուսնությունների և ծնելիության ցուցանիշները, ավելանում՝ մահացությանը: Բնակչության միգրացիայի և սեռատարիքային կառուցվածքի միջև եղած կապի մասին է վկայում այն, որ 2016թ. տվյալներով բնակչության մեջ կանանց և թոշակային տարիքի մարդկանց ամենամեծ մասնաբաժիններն ունեցել են առավել մեծ արտագաղթ ունեցող Լոռու և Շիրակի մարզերը: Վերջին տարիների ՀՀ մարզերի քաղաքների և ՆՎԾ-երի գյուղական բնակչության բնական վերարտադրության ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ որոշ քաղաքներում և գյուղական բնակավայրերում նկատվում է ժողովրդագրական ճգնաժամ՝ միգրացիայի բացասական սալդոյի հետ մեկտեղ առկա է նաև նեղ վերարտադրության ռեժիմ: Ժողովրդագրական վիճակը հատկապես անբարենպաստ է ծայրամասային գոտու Լոռու մարզի քաղաքներում ու Սյունիքի և Տավուշի մարզերի ՆՎԾ-երի գյուղական բնակավայրերում: ՀՀ բնակչության արտագաղթի առաջացած ժողովրդագրական բացասական հետևանքներն անկախության տարիներին թե՛ ժամանակի, և թե՛ տարածության մեջ համընդհանուր և համատարած բնույթ են կրում:

Զգալի են ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհաքաղաքական բացասական հետևանքները: ՀՀ բնակչության արտագաղթի ներկայիս ծավալները չեն բխում երկրի պաշտպանունակության, ազգային անվտանգության և զարգացման ռազմաքաղաքական շահերից, հատկապես, որ երկիրը գտնվում է աշխարհաքաղաքական բարդ և անկայուն տարածաշրջանում: Այս առումով հատկապես մտահոգիչ է նոսր բնակեցված ծայրամասային գոտու որոշ սահմանամերձ տարածքների (Տավուշ, Սյունիք, Վայոց Ձոր) գյուղական բնակչության արտահոսքի ծավալների մեծացումը: Երիտասարդ, աշխատունակ և քաղաքականապես ակտիվ բնակչության միգրացիաները ՀՀ-ում և առանձնապես ծայրամասային գոտու մարզերում նվազեցնում են բնակչության քաղաքական ակտիվությունը, խոչընդոտում քաղաքական գիտակցության և մշակույթի զարգացմանը:

ՀՀ-ից բնակչության արտագաղթին հայերից բացի մասնակցում են երկրում ապրող բոլոր ազգային փոքրամասնությունները, մինչդեռ ներգաղթին՝ հիմնականում հայերը, որի արդյունքում ՀՀ ազգային կազմը դարձել է ավելի միատարր: Հայ բնակչության միգրացիան մեծ ազդեցություն է թողնում նաև հայկական մշակույթի տարածման և հարստացման գործում: Սփյուռքը երկակի դեր է կատարում հայ բնակչության արտաքին միգրացիայի մասշտաբների և ուղղությունների ձևավորման գործում: Եթե խորհրդային տարիներին զանգվածային բնույթ կրեց հայրենադարձությունը սփյուռքի խոշոր կենտրոններից, ապա անկախության տարիներին՝ ընդհակառակը, սփյուռքի առկայությունը վերածվեց արտագաղթին նպաստող գործոնի: Դրանով կարելի է բացատրել բնակչության զանգվածային արտագաղթը դեպի ՌԴ, ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա և խոշոր հայկական համայնքներ ունեցող այլ երկրներ:

Բնակչության միգրացիոն տեղաշարժերի ճշգրիտ կանխատեսումները բարդ և գրեթե անլուծելի խնդիրներ են, քանի որ միգրացիաները սովորաբար տարերային են, ունեն հավանական բնույթ և կապված են հասարակական կյանքում տեղի ունեցող

քաղաքական, տնտեսական և սոցիալական բազմաթիվ տեղաշարժերի և գործընթացների հետ: Բնակչության միգրացիաների կանխատեսման համար օգտագործում են մի քանի մեթոդներ, որոնցից մենք նպատակահարմար ենք գտել օգտագործել էքստրապոլյացիայի (արտարկման) մեթոդը, քանի որ գտնում ենք, որ մոտակա տարիներին քիչ հավանական են ՀՀ-ում սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակների զգալի և արմատական տեղաշարժերը: Այս մեթոդի օգտագործման ժամանակ ենթադրվում է, որ միգրացիայի ներկայիս տեմպերն ու միտումները պահպանվելու են նաև կանխատեսվող հեռանկարում: ՀՀ բնակչության հեռանկարային թվի և ՄՍ-ի ծավալների էքստրապոլյացիոն միջնաժամկետ (10 տարի) և երկարաժամկետ (20 տարի) կանխատեսումներ անելիս օգտագործել ենք վերջին 20 տարիների համար (1996-2015թթ.) մեր կողմից ստացված ՄՍ-ի տվյալները: Արդյունքում ստացվել է, որ 2025թ. ՀՀ բնակչությունը միգրացիայի միջոցով կնվազի 243 հազար մարդով, իսկ 2035թ.՝ մոտ 467 հազարով: Բնակչության հեռանկարային թվի կանխատեսում կատարել ենք նաև Երևանի և ՀՀ մարզերի կտրվածքով: Արդյունքները ցույց են տալիս, որ բնակչության թվաքանակը հատկապես կտրուկ կնվազի ծայրամասային գոտու Լոռու, Վայոց Ձորի և Շիրակի մարզերում, իսկ համեմատաբար քիչ՝ Երևանում և նրա հարակից գոտում գտնվող Արմավիրի և Արարատի մարզերում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզում: Սակայն ՀՀ սեռատարիքային կառուցվածքի հնարավոր տեղաշարժերի վերլուծությունից պարզ է դառնում, որ մոտակա տարիներին սպասվում են ծնելիության ցուցանիշների կտրուկ նվազում և մահացության ցուցանիշների աճ: Ուստի, եթե հաշվարկների ժամանակ հաշվի առնենք ոչ թե նախորդ 20 տարիներին բնական շարժի ցուցանիշների գրանցված միտումները, այլ սպասվելիք փոփոխությունները, ապա կստանանք, որ 2025թ. ՀՀ բնակչությունը կկազմի արդեն մոտ 2780 հազար մարդ, իսկ 2035թ. կնվազի արդեն 17-18%-ով և կկազմի մոտ 2482 հազար մարդ: Կանխատեսվող ժամկետում արտագաղթի ներկայիս ուղղությունների վերաբերյալ կտրուկ փոփոխություններ չեն լինի, սակայն էական տեղաշարժեր կլինեն ներքին միգրացիաների ուղղություններում: Մոտակա մեկ-երկու տասնամյակում, կապված գյուղացիական տնտեսությունների խոշորացման հետ, զգալիորեն կավելանան գյուղից քաղաք ուղղությամբ ներքին միգրացիաները:

ՀՀ բնակչության միգրացիոն տեղաշարժերը զգում են կարգավորման անհրաժեշտություն, քանի որ միգրացիայի ներկայիս մասշտաբներն ու ուղղությունները չեն բխում երկրի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զարգացման շահերից: ՀՀ բնակչության միգրացիոն իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա միգրացիոն հիմնախնդիրները ենթակա չեն ինքնակարգավորման, իսկ պետության կողմից արդյունավետ ու համակարգված միջամտության բացակայությունն ավելի հավանական կդարձնի դրանց հետագա սրումը: Միգրացիայի կարգավորման համար ՀՀ կառավարությունը տարիների ընթացքում ընդունել է մի շարք օրենքներ, հայեցակարգեր, կնքել մի շարք միջազգային համաձայնագրեր, սակայն պետք է նշենք, որ պետության կողմից ՀՀ բնակչության միգրացիայի կարգավորման ուղղությամբ կատարված քայլերն առայժմ արդյունավետ չեն և չեն առաջացնում նկատելի դրական տեղաշարժեր: Դրանցում հաճախ հաշվի չեն առնվում ՀՀ բնակչության և տնտեսության տարածքային տարբերություններն ու տարածաշրջանային առանձնահատկությունները:

Ներկա փուլում հրատապ է դարձել ՀՀ աշխատանքային միգրացիայի կարգավորման հիմնախնդիրը, քանի որ դրանում ներգրավված է բնակչության մոտ 5-6%-ը: ԵՏՄ-ին ՀՀ անդամակցությունը կարող է մասնակիորեն նպաստել այդ

հիմնախնդիրների լուծմանը, քանի որ աշխատանքային միգրացիաների մոտ 90%-ը ուղղված է դեպի ՌԴ: Սակայն ՀՀ բնակչության ընդհանուր միգրացիոն իրավիճակի տեսանկյունից հնարավոր է, որ այն ունենա նաև խիստ բացասական հետևանքներ, քանի որ ներկայումս լայն տարածում են ստացել ընտանիքների վերամիավորմանն ուղղված միգրացիաները, երբ աշխատանքային միգրանտներն իրենց մոտ են կանչում իրենց ընտանիքների անդամներին և վերափոխվում մշտական միգրանտների: Այսինքն, մոտակա տարիներին ՀՀ–ից բնակչության արտագաղթը որոշ չափով կանխորոշվելու է դրսում աշխատող ՀՀ քաղաքացիների միգրացիոն վարքագծով: Սա մտահոգիչ է հատկապես այն պարագայում, երբ ՌԴ կառավարությունը որդեգրել է մի քաղաքականություն, որով հեշտացնում է օտարերկրացիների համար ՌԴ անձնագրերի ստացման գործընթացը:

ՀՀ բնակչության միգրացիայի, այդ թվում նաև աշխատանքային միգրացիայի ծավալների էական նվազումը հնարավոր է միայն ՀՀ սոցիալ-տնտեսական արագ զարգացման և արդյունավետ տարածքային կազմակերպման, ՀՀ մարզերում ներդրումների ծավալների զգալի ավելացման և նոր աշխատատատեղերի ստեղծման, մարզերի սոցիալ-տնտեսական համալիր զարգացման պայմաններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Մեր կողմից ներկայացված՝ ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության ուղղություններն ու մոտեցումները հնարավորություն են տալիս համակարգված ձևով բացահայտել բնակչության միգրացիայի պատճառահետևանքային կապերն ու տարածաժամանակային օրինաչափությունները:

2) Անկախության տարիներին ՀՀ-ից բնակչության արտագաղթը ժամանակի և տարածության մեջ կրել է համընդհանուր և համատարած բնույթ, այսինքն քննարկվող ամբողջ ժամանակահատվածում ՀՀ բոլոր մարզերի, քաղաքների և ՆՎԾ-երի գյուղական բնակչության ՄՍ-ն եղել է բացասական: Միգրացիայի միտումներն ու դրանք պայմանավորող գործոնները տարբեր կերպ են դրսևորվում Երևանում, նրա հարակից և ծայրամասային-լեռնային գոտիներում:

3) ՀՀ բնակչության արտաքին ՄՍ-ի բացասական ցուցանիշները 25 տարվա ընթացքում ունեցել են ինչպես բարձրացման փուլեր (1992-1994թթ., 2008-2010թթ.), որոնք ժամանակային առումով համընկնում են տնտեսական ճգնաժամի տարիների հետ, այնպես էլ նվազման փուլեր (1999-2002թթ., 2012-2013թթ.), որոնք համընկնում են տնտեսական ակտիվացման տարիների հետ:

4) ՀՀ տարաբնակեցման համակարգում անկախության տարիներին արտագաղթի առավել մեծ ծավալներ են ունեցել վերամշակող արդյունաբերական խոշոր կենտրոնները (Գյումրի, Վանաձոր, Չարենցավան, Սպիտակ և այլն), ինչպես նաև միագործառութային քաղաքները: ՀՀ մարզերից արտագաղթի առավել մեծ ծավալներ ունեցել են արդյունաբերական և քաղաքաբնակ Լոռու և Շիրակի մարզերը:

5) Համադրելով ՀՀ բոլոր քաղաքների և ՆՎԾ-երի գյուղական բնակչության ՄՍ-ի ցուցանիշները՝ առանձնացրել ենք ընդհանուր գծերով բնութագրվող քաղաքների և գյուղական շրջանների 4 տիպեր:

6) Բնակչության միգրացիոն տրամադրվածությունները բարձր են բոլոր մարզերում, տարբեր տիպի և մեծության բնակավայրերում, այսինքն համատարած բնույթ են կրում: Ըստ հարցման արդյունքների՝ բնակչության 40-50%-ը ցանկություն է հայտնել հարմար առիթի և հնարավորության դեպքում բնակվելու մեկնել այլ երկիր:

Կրթական համեմատաբար բարձր ցենզ ունեցող քաղաքային բնակչությունը նախընտրում է մեկնել եվրոպական զարգացած երկրներ և ԱՄՆ, իսկ գյուղական և ոչ այդքան բարձր կրթական ցենզ ունեցողները՝ ՌԴ:

7) Բնակչության արտագաղթի տրամադրվածությունների ձևավորման գործում համեմատաբար մեծ են սոցիալ-տնտեսական (աշխատատեղերի բացակայություն, ցածր աշխատավարձ) և սոցիալ-քաղաքական (անարդարություն, օրենքների չկիրառում և այլն) գործոնների ու հիմնախնդիրների դերն ու ազդեցությունը, իսկ համեմատաբար թույլ՝ աշխարհաքաղաքական և էկոլոգիական բնույթի գործոնների և հիմնախնդիրների դերն ու ազդեցությունը: Արտագաղթի նկատմամբ բնակչության միգրացիոն տրամադրվածությունների առաջացման գործոններն ու հիմնախնդիրները հիմնականում համապետական բնույթ են կրում, իսկ ներքին միգրացիոն տեղաշարժերինը՝ տեղական-բնակավայրային:

8) Խորհրդային տարիների համեմատությամբ ներքին միգրացիայի ծավալները նվազել են, իսկ ուղղությունները՝ փոխվել: Միգրացիան գրեթե ամբողջությամբ կորցրել է նախկինում ունեցած կարևոր դերը ուրբանիզացման գործընթացներում: Հետխորհրդային առաջին տասնամյակում որոշակի դեր են խաղացել քաղաքից գյուղ ուղղությամբ միգրացիաները: Ներկայումս ՀՀ բնակչության ներքին միգրացիոն տեղաշարժերը հիմնականում ունեն միակենտրոն բնույթ, որն ավելի է մեծացնում տարաբնակեցման համակարգում առկա տարածական և կառուցվածքային անհամաչափությունները Երևանի ու մնացած տարածաշրջանների և ավելի ցածր կարգի կենտրոնների միջև:

9) Անկախության առաջին տասնամյակում մեծամասամբ արտագաղթում էր քաղաքային բնակչությունը, իսկ վերջին տարիներին մեծացել է նաև գյուղական բնակչության արտագաղթի ծավալները: Մոտակա մեկ-երկու տասնամյակում նշված միտումները կարող են մեծանալ՝ գյուղատնտեսության համակենտրոնացման և ինտենսիվացման հետևանքով գյուղական վայրերում զգալի քանակով ազատ աշխատուժի գոյացման հետ կապված: ՀՀ տարբեր քաղաքներում և համեմատաբար խոշոր գյուղական համանքներում նոր աշխատատեղեր չստեղծելու պարագայում դրա մեծ մասը կարտագաղթի:

10) Բնակչության միգրացիոն հոսքերի բացասական ազդեցությունը հսկայական է ՀՀ բոլոր մարզերի, հատկապես Լոռու և Շիրակի մարզերի ժողովրդագրական իրավիճակների վրա (ցածր բնական աճ, սեռատարիքային անհամասնություններ, բնակչության ծերացում և այլն): Ժողովրդագրական առումով առավել խոցելի են ծայրամասային և սահմանամերձ Կապանի, Մեղրու, Նոյեմբերյանի և Տավուշի ՆՎԾ-երի քաղաքային և գյուղական բնակավայրերը, Լոռու մարզի քաղաքային բնակավայրերը, որոնցում բնակչության թիվը նվազում է ոչ միայն մեխանիկական, այլ նաև բնական շարժի միջոցով:

11) Տնտեսական և քաղաքական առումներով առավել ակտիվ և կրթական բարձր ցենզ ունեցող երիտասարդ մասնագետների արտագաղթը նվազեցնում է ՀՀ և հատկապես նրա լեռնային և սահմանամերձ համեմատաբար նոսր բնակեցված մարզերի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական ներուժը և դրանով պայմանավորված՝ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական դերը տարածաշրջանում:

12) Մոտակա տարիներին բնակչության միգրացիայի առկա միտումները պահպանվելու են, քանի դեռ չեն վերացել միգրացիոն հոսքերը ձևավորող սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոններն ու պայմանները: Միգրացիոն հոսքերի

կառուցվածքում կմեծանա առավել գյուղաբնակ լեռնային և սահմանամերձ գոտու բնակչության միգրացիոն ակտիվությունը: Դա նշանակում է, որ արտագաղթի կրճատմանն ուղղված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի (ներդրումներ, նոր աշխատատեղեր ու ենթակառուցվածքներ, հարկային զեղչեր և այլն) և միգրացիայի կարգավորման հայեցակարգերի մշակման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ տարածաշրջանային առանձնահատկությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) ՀՀ բնակչության միգրացիայի լիարժեք ուսումնասիրության համար անհրաժեշտ է բարելավել միգրանտների հաշվառման և գրանցման գործընթացը: Աշխարհագրական ուսումնասիրության համար հատկապես կարևոր է բոլոր բնակավայրերում և համայնքներում կազմակերպել միգրացիաների սոցիալ-ժողովրդագրական տվյալների (սեռ, տարիք, կրթություն և այլն) և հնարավոր ուղղությունների հաշվառումը: Հարկավոր է մարզերի մակարդակով հաշվառման ենթարկել ոչ միայն արտաքին, այլ նաև ներմարզային միգրացիաները:

2) ՀՀ բնակչության միգրացիայի կարգավորման հայեցակարգերի և ռազմավարության մշակման և իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանային առանձնահատկությունները՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով միգրացիոն առումով առավել լարված և խոցելի քաղաքներին և գյուղական շրջաններին:

3) ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման համապետական, մարզային և համայնքային ծրագրերում առաջնահերթ համարել բնակչության արտագաղթն առաջացնող կամ դրան նպաստող համապետական, մարզային և համայնքային բնույթի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են հետևյալ աշխատանքները.

1. Մանասյան Հ., Մանասյան Մ., ՀՀ լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման հիմնահարցերը (Սյունիքի մարզի օրինակով), ԵՊՀ Տարեգիրք 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 671-680
2. Մանասյան Հ., Մանասյան Մ., Վայոց Ձորի մարզի բնակչության միգրացիայի և տարաբնակեցման արդի հիմնախնդիրները, Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները ՀՀ-ում (հանրապետական գիտաժողովի նյութեր), Երևան, Նահապետ 2014, էջ 46-53
3. Манасян А., Манасян М., Устойчивое развитие горных регионов и география, Modern Problems of Geography and Anthropology, Proceedings of International Conference, Tbilisi, 2015, pp. 321-323
4. Մանասյան Հ., ՀՀ բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերը, ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 116-120
5. Մանասյան Հ., Մանասյան Մ., ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական առանձնահատկությունները, Հայկական լեռնաշխարհ (հանրապետական գիտաժողովի նյութեր), Երևան, 2015, էջ 185-194

6. Մանասյան Հ., Մանասյան Մ., ՀՀ բնակչության միգրացիայի սոցիալ-աշխարհագրական վերլուծության հիմնական ուղղությունները, Կրթությունը և գիտությունը Արցախում 3-4, ԵՊՀ, Երևան, 2016, էջ 123-131
7. Մանասյան Հ., ՀՀ բնակչության միգրացիայի ժողովրդագրական հետևանքները, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016, էջ 65-68
8. Մանասյան Հ., ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության հիմնահարցերը, «Ֆինանսեր և Էկոնոմիկա» թիվ 3-4, Երևան, 2017, էջ 81-83
9. Մանասյան Հ., Ավագյան Ա., Մանասյան Մ., ՀՀ բնակչության միգրացիան և ժողովրդագրական իրավիճակի տարածաշրջանային առանձնահատկությունները, «Ֆինանսեր և Էկոնոմիկա» թիվ 3-4, Երևան, 2017, էջ 103-106

МАНАСЯН АЙК

ГЕОГРАФИЧЕСКИЙ АНАЛИЗ СОВРЕМЕННОЙ МИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ РА

Резюме

Актуальность и важность географического исследования миграции населения объясняется двумя обстоятельствами: а) миграция населения - это социально-пространственное явление и оставляет значимое влияние на территориальную организацию общества, б) миграция населения - это комплексное явление, и имея ввиду интегральный потенциал и системный характер географического исследования, география по сравнению с другими науками более готова реализовать всесторонние и взаимосвязанные пространственно-временные и комплексные исследования миграции.

Цель исследования - выполнить комплексный и пространственно-временной географический анализ миграции населения РА, выяснить и оценить современное состояние миграционных движений, причинно-следственные связи и воздействие на развитие и территориальную организацию разных сфер общественной жизни.

Для достижения цели исследования перед нами были поставлены следующие исследовательские задачи:

●Выяснить политические, экономические, социально-демографические, этно-культурные факторы и условия, формирующие современные миграционные потоки населения РА.

●Выяснить региональные особенности миграции, научно обосновать взаимосвязь миграции с экономическими и социально-демографическими процессами регионов и отдельных поселений.

●Сделать научно обоснованные предложения, чтобы во время разработки и реализации государственной политики по урегулированию миграции населения РА учитывались географические факторы.

Объект исследования - современные внешние и внутренные миграции населения РА, а **предмет исследования** - пространственно-временные изменения и региональные особенности миграции населения РА и их взаимосвязи с территориальной организацией разных сфер общественной жизни.

Первая глава работы посвящена методологическим и теоретическим вопросам исследования миграции населения, вторая глава - масштабам, направлениям и причинам внешней миграции населения РА, третья глава - пространственно-временному анализу миграционных движений населения РА, четвертая глава - общественно-географическим последствиям миграции населения РА и их проблемам регулирования и прогнозирования миграции населения РА.

Научная новизна работы:

●Впервые было сделано всестороннее и целостное общественно-географическое изучение современной миграции населения РА.

●Выяснились этапы и современные тенденции внешней миграции населения РА и их связи с политическими, экономическими, социально-демографическими процессами.

●Выяснились общественно-географические последствия миграции населения РА, структурные и территориальные сдвиги системы расселения под воздействием внутренней и внешней миграции.

В настоящее время все компоненты системы расселения, населенные пункты разных величин и типов участвуют в миграционных процессах, при том почти все типы поселения имеют отрицательные показатели сальдо миграции. По сравнению с советскими годами объемы внутренней миграции уменьшились, а направления изменились. В настоящее время миграция населения утратила бывшую важную роль в урбанизационных процессах.

В диссертации были сделаны анализы и прогнозирования ожидаемых тенденций миграционных процессов РА и ее регионов, а также были сделаны предложения на счет учета региональных условий и особенностей при государственном урегулировании миграции.

MANASYAN HAYK

GEOGRAPHICAL ANALYSIS OF THE CONTEMPORARY POPULATION MIGRATION OF THE RA

Summary

Relevance and importance of a geographical research of population migration is explained by two circumstances: **a)** population migration is a socio-spatial phenomenon and have significant impact on the territorial organization of society, **b)** population migration is a complex phenomenon, and taking into account the integral potential and the systemic feature of a geographical research, in comparison with other sciences geography is more ready to implement comprehensively and interrelated spatio-temporal and complex researches of migration.

The aim of the research is to implement the complex and spatio-temporal geographical analysis of the population migration of the RA, to find out and estimate the current state of the migratory movements, relations of cause and effect as well as impact on the development and the territorial organization of different spheres of social life.

To achieve our research goals we put the following poblems for us:

● To find out political, economical, socio-demographic and ethno-cultural factors and conditions affecting to the formation of the contemporary migration flows of the population of the RA.

● To find out regional features of the migration, to substantiate scientifically interrelation of the migration with economical and socio-demographic processes of the regions and separate settlements.

● To make scientifically based recommendations for considering geographical factors in the process of development and implementation of state policy for regulation of population migration of the RA.

The research object is the contemporary external and internal migrations of the population of the RA, and **the research subject** is the spatio-temporal changes and regional features of the population migration of the RA and their interrelation with the territorial organizations of different spheres of the social life.

The first chapter of the work concerns to the methodological and theoretical issues of the research of population migration, the second chapter deals with the scales, the directions and the reasons of the external migration of the population of the RA, the third chapter focuses on the spatio-temporal analysis of migratory movements of the population of the RA, the forth chapter concentrates on human geographic consequences of the population migration of the RA and the problems of regulation and forecasting of the population migration of the RA.

Scientific novelty:

● For the first time a comprehensive and complex socio-geographical study of the contemporary population migration of the RA has been conducted.

● The stages and the current trends of the external population migration of the RA and their relations with political, economical, socio-demographic processes have been revealed.

● Human geographic consequances of the population migration of the RA, the structural and territorial shifts in the settlement system with the influence of the internal and external migration have been found.

Currently, all components of the settlement system, settlements of different sizes and types are involved in migration processes, while almost all types of settlements have negative indicators of migration balance. In comparison with the Soviet period, the volume of internal migration has been decreased and the directions have been changed. At present, the population migration has lost its former important role in urbanization processes.

Analysis and forecasts of the expected trends of the migration processes of the population of the RA and its regions have been done in the dissertation. Scientifically based recommendations have been made to consider the regional conditions and the features in the state regulation of migration.